Հավելված N 4

## ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի (այսուհետª ծրագիր) մշակման և իրականացման օրենսդրական հիմքը "Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքն է և նրանից բխող իրավական ակտերը:

2. Ծրագրի մշակման ժամանակ հաշվի են առնվել նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ հաստատված "Կայուն զարգացման ծրագրում" ամրագրված դրույթները, ինչպես նաև Հայաստանի տնտեսության վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները մեղմելուն ուղղված Հայաստանի Հանրապետության Կառավարության հակաճգնաժամային միջոցառումների ծրագիրը:

3. Ծրագրի նպատակն է`

1) բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանն ուղղված միջոցառումների իրականացում, զբաղվածության խթանում.

2) Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությամբ պայմանավորված աշխատաշուկայում առաջացած լարվածության մեղմում:

4. Զբաղվածության ոլորտի հիմնախնդիրներն են`

1) համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով զանգվածային ազատումների, կրճատվող աշխատատեղերի թվի և ռեմիգրանտների թվաքանակի աճ.

2) աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության խորացում, առանձին մասնագիտությունների գծով թափուր աշխատատեղերի լրացման խոչընդոտներ.

3) աշխատաշուկայում անմրցունակ անձանց, մասնավորապես` հաշմանդամների զբաղվածության ապահովման և հասարակության մեջ ինտեգրման հարցում դժվարություններ.

4) տարածքային անհամաչափ զարգացում, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով առանձին տարածաշրջաններում գործազրկության մակարդակների էական տարբերությունների էլ ավելի մեծացում.

5) աշխատանքային փորձ չունեցող երիտասարդների զբաղվածության ցածր մակարդակ.

6) գյուղական շրջաններում բնակչության թերզբաղվածություն, ոչ գյուղատնտեսական զբաղվածության անբավարար մակարդակ.

7) օրենսդրության կատարելագործման անհրաժեշտություն՝ ուղղված զբաղվածությանն աջակցող նոր ակտիվ ծրագրերի մշակման և ներդրման ճկուն համակարգ ստեղծելուն.

8) տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ սոցիալական երկխոսության ոչ բավարար մակարդակ:

5. Համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով հանրապետությունում շարունակվում է կազմակերպությունների լուծարման, աշխատուժի աշխատանքից ազատումների գործընթացը, աճում է ժամանակավոր պարապուրդում գտնվողների թվաքանակը: Համաձայն աշխատաշուկայի իրավիճակի պարբերաբար իրականացվող վերլուծության և գնահատման արդյունքների՝ տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում կտրուկ նվազել է արտադրողականությունը կամ մատուցվող ծառայությունների ծավալը, ինչն առավելապես նկատելի է առևտրի և սպասարկման, արդյունաբերության (առավելապես հանքարդյունաբերության, վերամշակող արդյունաբերության), տրանսպորտի և կապի, շինարարության, առողջապահության ոլորտներում: Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության (աղբյուրը՝ անհատական տվյալների բազա)՝ 2009թ. հունվար-մայիս ընկած ժամանակահատվածում աշխատանքից տարբեր պատճառներով ազատվել է շուրջ 47096 մարդ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 11.1%-ով (4700 մարդ): Նույն ժամանկահատվածում աշխատանքի է տեղավորվել 85800 մարդ (ցուցանիշին նպաստել են հիմնականում թաքնված զբաղվածութունն իրավական դաշտ բերելուն ուղղված միջոցառումները), որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 6%-ով (5163 մարդ):

Աշխատաշուկայի լարվածությանը նպաստել է նաև օրենսդրական դաշտի փոփոխության արդյունքում՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում սոցիալական խումբ չունեցող անձանց աղքատության գնահատման միավորի նվազեցումը (նախկին 20 միավորի փոխարեն՝ 17 միավոր):

Ըստ կանխատեսումների՝ աշխատաշուկայի լարվածությանը կնպաստի նաև էմիգրանտների արտագնա աշխատանքի չմեկնելը:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և կանխատեսումները՝ առաջիկայում կշարունակի աճել նախարարության “Զբաղվածության պետական ծառայություն” գործակալության (այսուհետ՝ գործակալություն) մարզային և տարածքային կենտրոններում հաշվառվողների, գործազուրկի կարգավիճակ, ինչպես նաև գործազրկության նպաստի իրավունք ստացողների թվաքանակը: Սպասվում է, որ գործազրկությունը բարձր կլինի հատկապես տղամարդկանց (արտագնա աշխատանքի չմեկնելու պատճառով), աշխատանքային փորձ և հմտություններ չունեցող երիտասարդների և աշխատաշուկայում անմրցունակ անձանց շրջանում:

Գործակալության տվյալներով՝ 2009թ. հունիս ամսին հանրապետությունում գործազրկության մակարդակը տարեսկզբի համեմատ աճել է 0,7 տոկոսային կետով և կազմել է 7,0%: Այն հանրապետության միջինից բարձր է Շիրակի (12.5%), Լոռու (12.0%), Սյունիքի (11.9 %), Կոտայքի (8.8%), Տավուշի (8.3%) մարզերում:

Գծ.1 Գործազրկության մակարդակը ՀՀ մարզերում և Երևան քաղաքում, տոկոսով՝




2009թ.-ի հուլիսի 1-ի դրությամբ գործակալության մարզային և տարածքային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրողների թիվը կազմել է 101.0 հազար մարդ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 10.6 %-ով (91.3 հազ. մարդ), իսկ տարեսկզբի նկատմամբ՝ 12.0%-ով (90.2 հազ. մարդ): Աշխատանք փնտրողների թվաքանակում կանանց տեսակարար կշիռը կազմել է 66.4 % (67.1 հազ. մարդ), երիտասարդների տեսակարար կշիռը՝ 21.5% (21.7 հազ, մարդ): Աշխատանք փնտրողների 83.3%-ը (84.1 հազ. մարդ) ստացել է գործազուրկի կարգավիճակ: Այս ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 10,4%-ով (76.3 հազ. մարդ), իսկ տարեսկզբի նկատմամբ՝ 12,6%-ով (74.7 հազ. մարդ): Գործազուրկների թվաքանակում կանանց տեսակարար կշիռը տարեսկզբի համեմատ շարունակում է նվազել՝ 75,5%-ից հասնելով 71.3%-ի: Այս նվազումը պայմանավորված է գործազուրկի կարգավիճակ ստացած տղամարդկանց թվաքանակի աճով (տարեսկզբի 18,3 հազ. մարդու փոխարեն կազմելով 24,1 հազ. մարդ):

Գծ.2 Գործազուրկ կանանց և տղամարդկանց տեսակարար կշիռը գործազուրկների թվաքանակում ըստ տարիների, տոկոսով




Երիտասարդների տեսակարար կշիռը գործազուրկների թվաքանակում կազմել է 19.7% կամ 16.6 հազ. մարդ:

Աշխատանք փնտրողների մեջ առաջին անգամ աշխատանք փնտրող անձինք կազմել են 13752 մարդ:

Երիտասարդները աշխատանքի տեղավորման հարցում ունեն լուրջ խնդիրներ: Նրանց մի մասը, չունենալով աշխատանքային փորձ և հմտություն, հաճախ մերժվում է գործատուի կողմից, մյուս մասը, ովքեր ընտրել են աշխատաշուկայում պահանջարկ չունեցող մասնագիտություն՝ դառնում են գործազուրկ կամ ստիպված են լինում վերամասնագիտանալ: Ճգնաժամի հետևանքով աշխատաշուկայում ստեղծված իրավիճակն էլ ավելի խոցելի կդարձնի նրանց:

Շարունակում է բարձր մնալ մեկ տարուց ավելի գործազուրկի կարգավիճակ ունեցող անձանց թվաքանակը, որը կազմում է գործազուրկների թվաքանակի 57.9%-ը: Երկարատև գործազրկությունը լուրջ հիմնախնդիր է, քանի որ ժամանակի ընթացքում այդ կարգավիճակում գտնվող անձինք՝ կորցնելով աշխատանքային հմտությունները, դառնում են աշխատաշուկայում անմրցունակ: Այս խմբում մեծ թիվ են կազմում 50-ից բարձր տարիք ունեցողները և հաշմանդամները:

Ինչպես և սպասվում էր, նախորդ ամիսների համեմատ նվազել է թափուր աշխատատեղերի հայտեր ներկայացնող գործատուների թիվը:

Գործատուների կողմից ներկայացվող թափուր աշխատատեղերի ամսական միջին թիվը կազմում է 947, որի 41.6%-ը կրկնվող հայտերն են: Այս ցուցանիշը 33% նվազել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ:

Թափուր աշխատատեղերի չլրացման պատճառները տարբեր են. աշխատուժի մասնագիտական որակավորման անհամապատասխանություն գործատուի պահանջներին, աշխատանքային ոչ բավարար պայմաններ (չկանոնավորված աշխատաժամեր, ցածր աշխատավարձ և այլն), որոշ մարզերում համապատասխան մասնագիտությամբ աշխատուժի

բացակայություն: Եթե մայրաքաղաքում մեծ տոկոս է կազմում բանվորական և սպասարկման ոլորտների մասնագետների պահանջարկը (շուրջ 59.2%), մարզերում հիմնականում գերակշռում է բժիշկների և ուսուցիչների պահանջարկը (շուրջ 12.8 %):

Զգալիորեն մեծացել է աշխատանք փնտրողների ակտիվությունը, ինչը պայմանավորված է ընտանիքների եկամուտների նվազմամբ և հատկապես՝ արտերկրից ստացվող դրամական միջոցների կրճատմամբ: Տարեսկզբից աշխատանքի է տեղավորվել 4208 աշխատանք փնտող, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 6.3 %-ով (3959 մարդ): Աշխատանքի տեղավորվածներից 2621-ը (62.3%-ը) կանայք են, 964-ը (22.9%-ը) երիտասարդներ են: Տեղավորվածների թվաքանակում ամենամեծ տեսակարար կշիռը կազմում է առևտրի և հասարակական սննդի ոլորտում՝ 26.5%, արդյունաբերության ոլորտում՝ 20.0%, շինարարության ոլորտում՝ 15.3%, կրթության ոլորտում՝ 6.3%, տրանսպորտի և կապի ոլորտում՝ 6.1 %:

Աշխատաշուկայի լարվածության մեղմմանը, հատկապես մարզերում, էապես նպաստել է “Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում” ծրագրի իրականացումը, որի շրջանակում 2503 աշխատանք փնտրող անձ ապահովվել է ժամանակավոր աշխատանքով (մարտ-հունիս ամիսներին):

Տարեսկզբից աճել է նպաստառու գործազուրկների թվաքանակը և հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 23707 մարդ, որը տարեսկզբի համեմատ ավելացել է 7037-ով:

2009թ. առաջին կիսամյակում զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում ընդգրկվել են աշխատանք փնտրողների 25.6 %-ը:

6. Զբաղվածության կարգավորման գործող պետական ծրագրերն են.

1) գործազուրկների մասնագիտական ուսուցում.

2) հաշմանդամների մասնագիտական ուսուցում, աշխատանքային ունակությունների վերականգնում.

3) երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց վերամասնագիտացում.

4) գործազուրկներին այլ վայր աշխատանքի գործուղելու կապակցությամբ նյութական ծախսերի հատուցում.

5) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և հաշմանդամներին տրամադրվող ֆինանսական աջակցություն.

6) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելու դեպքում աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին.

7) վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում.

8) գործազրկության նպաստի վճարում.

9) թաղման նպաստի վճարում.

10) աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպում.

11) թափուր աշխատատեղերի տոնավաճառի կազմակերպում:

Բնակչության զբաղվածության կարգավորումն իրականացվում է ինչպես պետական, այնպես էլ միջազգային և այլ կազմակերպությունների հետ իրականացվող ծրագրերի և միջոցառումների արդյունքում:

7. Զբաղվածության պետական ծրագրերի և միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է.

1) տարվա ընթացքում զբաղվածության մարզային և տարածքային կենտրոններում խորհրդատվություն ստացող անձանց թվաքանակի աճ՝ առնվազն 20 %-ով.

2) զբաղվածության ակտիվ ծրագրերում ընդգրկվածների թվաքանակի աճ՝ առնվազն 1%-ով.

3) մասնագիտական ուսուցման դասընթացներն ավարտածների մինչև 50%-ի աշխատանքի տեղավորում ( 1 տարվա ընթացքում).

4) աշխատանքի տեղավորվածների թվի աճ՝ առնվազն 2 %-ով.

5) հաշվառված աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորում՝ առնվազն 1%.

6) հաշվառված երիտասարդների աշխատանքի տեղավորում՝ առնվազն 2%.

7) զբաղվածության մարզային և տարածքային կենտրոնների հետ համագործակցող գործատուների թվի աճ՝ առնվազն 1 %-ով:

## ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

| հ/հ | Միջոցառման անվանումը | Պատասխանատու կատարողը | Ակնկալվող արդյունքները | Կատարման ժամկետը | Ֆինանսավորման դբյուրը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Աշխատանք փնտրող անձանց խորհրդատվության տրամադրում և հաշվառում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Իրականացնել շուրջ 120000 աշխատանք փնտրող անձանց խորհրդատվություն և հաշվառում (2008թ.-ին՝ 115 000 ) | տարվա ընթացքում | ֆինանսավորում չի պահանջում |
| 2. | Աշխատանք փնտրող անձանց աշխատանքի տեղավորման աջակցություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Իրականացնել շուրջ 8800 աշխատանք փնտրող չզբաղված անձանց աշխատանքի տեղավորման միջնորդություն | տարվա ընթացքում | ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | Աշխատանք փնտրող անձանց մասնագիտական կողմնորոշման խորհրդատվության տրամադրում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Իրականացնել շուրջ 25000 աշխատանք փնտրող անձանց խորհրդատվություն | տարվա ընթացքում | ֆինանսավորում չի պահանջում |
| 4. | Աշխատուժի առաջարկի և պահանջարկի գնահատման նպատակով աշխատաշուկայի վերաբերյալ տվյալների հավաքագրում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Գործատուների հետ համագործակցության արդյունքում յուրաքանչյուր ամիս ստանալ 1100-1200 թափուր աշխատատեղի հայտ | տարվա ընթացքում | ֆինանսավորում չի պահանջում |
| 5. | Ծրագրերի արդյունավետության մոնիտորինգ և գնահատում, տեղեկատվական բազաների տվյալների համադրում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կատարել համակարգում իրականացվող զբաղվածության ծրագրերի մոնիտորիգ | տարվա ընթացքում | ֆինանսավորում չի պահանջում |
| 6. | Գործատուների հետ համագործակցության արդյունավետության բարձրացման ձևերի և մեթոդների կատարելագործում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կատարել ուսումնասիրություն՝ տարեկան 2 անգամ, ընտրանքով ձևավորված 6000 գործատուի մոտ | տարվա ընթացքում | միջազգային դոնոր կազմակերպու-թյուններ |
| 7. | Համակարգի տեղեկատվական բազաների շարունակական կատարելագործում, շահագործում, տեղեկատվական հոսքերի փոխանակման ապահովում (“Գործ” ծրագիր) | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կատարել համակարգում հաշվառված շուրջ 85000 գործազուրկների և զբաղվածների տվյալների բազայի համադրում | տարվա ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 8. | Սոցիալական գործընկերության ամրապնդում և զարգացում, զբաղվածության պետական ծրագրերի մշակմանը և իրականացմանը սոցիալական գործընկեր կողմերի մասնակցության ապահովում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Հրավիրել հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեների նիստ եռամսյակը մեկ անգամ և անհրաժեշտությունից ելնելով | տարվա ընթացքում | ֆինանսավորում չի պահանջում |
| 9. | Զբաղվածության բնագավառը կարգավորող օրենսդրության կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Օրենսդրության կատարելագործում | տարվա ընթացքում | ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10. | Զբաղվածության պետական ծրագրերի հանրային իրազեկում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Յուրաքանչյուր ամիս և անհրաժեշտությունից ելնելով տեղեկատվություն տալ համակարգում իրականացվող ծրագրերի վերաբերյալ | տարվա ընթացքում | ֆինանսավորում չի պահանջում |
| 11. | Գործազրկության նպաստի վճարում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ամսական միջին թվով 21000 գործազուրկի նշանակել և վճարել գործազրկության նպաստ | տարվա ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 12. | Գործազուրկների մասնագիտական ուսուցման կազմակերպում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կազմակերպել 1370 գործազուրկի մասնագիտական ուսուցում | տարվա ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 13. | Հաշմանդամների աշխատանքային ունակությունների վերականգնում և մասնագիտական ուսուցման կազմակերպո | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կազմակերպել 77 հաշմանդամի աշխատանքա-յին ունակությունների վերականգնում և մասնագիտական ուսուցում | տարվա ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 14. | Երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց վերամասնագիտացման կազմակերպում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կազմակերպել 20 երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց վերամասնագիտացում | տարվա ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 15. | Այլ վայր աշխատանքի գործուղման կապակցությամբ գործազուրկների նյութական ծախսերի հատուցում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կազմակերպել այլ վայր աշխատանքի գործուղման կապակցությամբ 30 գործազուրկի նյութական ծախսերի հատուցում | տարվա ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 16. | Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և հաշմանդամներին տրամադրվող ֆինանսական աջակցություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կազմակերպել ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար 100 գործազուրկի և հաշմանդա-մի ֆինանսական աջակցու-թյան տրամադրում | տարվա ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 17. | Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելու դեպքում աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կազմակերպել աշխատաշուկայում անմրցունակ 180 անձանց աշխատանքի ընդունելու դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում | տարվա ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 18. | Թաղման նպաստի վճարում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Վերջին 3 տարվա վերլուծության արդյունքներով՝ կանխատեսվում է 120 գործազուրկի մահվան դեպքում թաղման նպաստի վճարում | տարվա ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 19. | Աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Իրականացնել մեկ հետազոտություն աշխատաշուկայի կանխատեսման նպատակով | տարվա ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 20. | Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 4959 աշխատանք փնտրող անձանց ժամանակավոր աշխատանքով ապահովում | տարվա ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, համայնքային բյուջե, միջազգային կազմակերպու-թյուններ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 21. | Թափուր աշխատատեղերի տոնավաճառի կազմակերպում, արդյունքների գնահատում և կատարելագործում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կազմակերպել 6 աշխատանքի տոնավաճառ շուրջ 200 գործատուի մասնակցությամբ, որի արդյուքում կհամալրվի թափուր աշխատատեղերի 30%-ը | տարվա ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 22. | Աշխատանքի ակումբների աշխատանքների կազմակերպում և համակարգում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Զբաղվածության կենտրոններում ստեղծված 11 աշխատանքային ակումբներից յուրաքանչյու-րում տարվա ընթացքում խմբային աշխատանքներում կընդգրկվի 60 աշխատանք փնտրող չզբաղված անձ | տարվա ընթացքում | միջազգային դոնոր կազմակերպու-թյուններ |
| 23. | “Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն” ՊՈԱԿ-ի արդյունավետ գործունեության կազմակերպում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 1500 դեռահասներին և երիտասարդներին աշխատանքի ընտրության և մասնագիտական կողմնորոշման խորհրդատվության տրամադրում | տարվա ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 24. | Հաշմանդամներին ուսուցողական, խորհրդատվական և աշխատանքի վերականգնման ծառայությունների տրամադրման նպատակով “Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն” ՊՈԱԿ-ի արդյունավետ գործունեության կազմակերպում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կազմակերպել 720 հաշմանդամի ուսուցողական, խորհրդատվական և աշխատանքի վերականգնման ծառայությունների տրամադրում | տարվա ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 25. | Մասնագիտական ուսուցման կազմակերպում այլ կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում (միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ներ, ուսումնական կենտրոններ, գործատուներ) | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կազմակերպել 150 աշխատանք փնտրող չզբաղված անձի մասնագիտական ուսուցում | տարվա ընթացքում | Հասարակական կազմակերպու-թյուններ,<br>միջազգային դոնոր կազմակերպությու ններ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |

Հավելված N 5

## ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ

### ԲԱԺԻՆ 1. I . ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. «Երեխայի իրավունքների պաշտպանության 2010 թվականի տարեկան ծրագիրը» (այսուհետ` ծրագիր) մշակվել է «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 և 34 հոդվածների պահանջներին համապատասխան: Ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003թ. դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագրի» հիմնական ուղղությունները:

2. Ծրագիրը համահունչ է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ հաստատված «Կայուն զարգացման ծրագրի» դրույթներին, համապատասխանում է երեխայի իրավունքների պաշտպանության ստանձնած միջազգային պարտավորություններին և ուղղված է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության հիմնախնդիրների լուծմանը: Հայաստանի Հանրապետությունում ներկայում իրականացվում են երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի բարեփոխումներ:

### II. Տարեկան ծրագրի նպատակը և խնդիրները

3. Ծրագրի նպատակն է`

1) ՀՀ երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակումը և իրականացումը,

2) երեխաների իրավունքների պաշտպանության գործող եռաստիճան համակարգի զարգացումը,

3) կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխայի սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովումը,

4) երեխայի խնամքի և պաշտպանության հաստատություններում երեխաների թվի նվազեցումը, այդ հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելումը,

5) ծնողազուրկ և առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրամադրվող այլընտրանքային ծառայությունների ցանցի ստեղծումը,

6) երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների բարելավումը, խնամվող երեխաների ինտեգրումը հասարակությանը,

7) հաշմանդամ երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների ստեղծումը:

4. Ծրագրի հիմնական խնդիրներն են`

1) Երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավական դաշտի մշակումը և կատարելագործումը,

2) կյանքի ծանր իրավիճակներում հայտնված երեխաների սոցիալական ապահովությունը, նրանց օրինական շահերի և իրավունքների պաշտպանությունը,

3) մանկատներում, խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում, հատուկ հանրակրթական հաստատություններում երեխաների քանակի նվազեցումը, հոսքի կանխարգելումը,

4) երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների բարեկարգումը,

5) երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների գործունեության բարելավումը,

6) կրթության համակարգի շարունակական զարգացումը,

7) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կրթության ապահովումը, մասնագիտական կողմնորոշումը և ուսուցումը,

8) միջազգային ասպարեզում կրթության համակարգի մրցունակության ապահովումը,

9) վերարտադրողական ներուժի ավելացումը, բժշկաժողովրդագրական ցուցանիշների բարելավումը,

10) մոր և մանկան առողջապահական ծառայությունների որակի և մատչելիության բարելավումը,

11) հղիների նախածննդյան խնամքի և հիվանդանոցային բուժօգնության ցուցանիշների բարելավումը, որպես վերջնական արդյունք մայրական հիվանդացության և մահացության ցուցանիշների կրճատումը,

12) երեխաների որակյալ և մատչելի ծառայությունների ապահովումը, որպես արդյունք մանկական հիվանդացության և մահացության կրճատումը,

13) դեռահասների համար բարյացակամ առողջապահական ծառայությունների ստեղծումը, դեռահասների վերարտադրողական և սեռական առողջության բարելավումը:

## III. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

5. Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հիմնահարցերին ուղղված քաղաքականությունը շարունակում է մնալ գերակա ուղղություն, և սոցիալական ոլորտի բարեփոխումները հիմնականում ուղղված են նրանց իրավունքների և շահերի պաշտպանությանը, խնամքի և սոցիալական հոգածության ենթահամակարգի զարգացմանը և երեխաներին տրամադրվող սոցիալական ծառայությունների ապակենտրոնացմանը, ինչը կնպաստի երեխաների համակողմանի զարգացմանը և լիարժեք կայացմանը:

6. 2009թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով իրականացվում են մի շարք ծրագրեր. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում իրականացվում է երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների բեռնաթափման ծրագիր

նախարարության և «Առավոտ» հասարակական կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն: Տարվա ընթացքում նախատեսվում է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող գիշերօթիկ հաստատությունից թվով 40 երեխա վերադարձնել կենսաբանական ընտանիք և կանխարգելել թվով 10 երեխայի մուտքը մանկատուն:

7. «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Հայ օգնության միություն հասարակական կազմակերպությունների հետ համատեղ 2009թ. աջակցություն է ցուցաբերվել 40 շահառուի (շրջանավարտների ուսումնասիրություն և անհատական ծրագրերի կազմում, սոցիալական պատրոնաժ, մասնագիտական կողմնորոշում, ուսուցում, վերապատրաստում, հիմնական կարիքները բավարարող եկամտի ապահովում՝ դրամական օգնություն, կրթաթոշակի հատկացում, միանվագ դրամական օգնություն, բժշկական օգնություն, բժշկական խորհրդատվություն, իրավաբանական աջակցության տրամադրում):

8. Իրականցվում է երեխաների խնամքի ապահովումը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի 8 մանկատներում: 01.07.2009թ. տվյալներով խնամվում է 885 երեխա, այդ թվում 375-ը՝ մասնագիտացված մանկատներում:

9. Իրականացվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ 7 հաստատություններում երեխաների խնամքի ապահովումը: 01.07.2009թ. տվյալներով խնամվում է սոցիալապես անապահով ընտանիքների մոտավորապես 700 երեխա:

10. Իրականացվում է նախարարության համակարգի երեխաների ցերեկային հոգածության 2 կենտրոններում ռիսկի խմբի 200 երեխայի և նրանց ընտանիքների ծառայությունների մատուցում:

11. Իրականացվում է «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության Տավուշի մարզի 4 ցերեկային կենտրոններին աջակցության ծրագիրը (տարվա ընթացքում 4 կենտրոնում աջակցություն է ստանում շուրջ 750 շահառու), որի շրջանակներում տրամադրվում են կենտրոնների աշխատակիցների աշխատավարձը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները:

12. Իրականացվում է «Խնամատար ընտանիքի» ծրագիրը, ըստ որի մանկատան 22 երեխա խնամվում է 20 խնամատար ընտանիքում:

13. Կենտրոնացված հաշվառման է վերցվել 43 որդեգրման ենթակա երեխա, 89 որդեգրողների թեկնածու, որդեգրվել է 23 երեխա: Որդեգրման գործընթացի կատարելագործման, տեղեկատվական հոսքերի կենտրոնացման, կանոնակարգման, կառավարման և վերահսկման նպատակով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում կատարվել են փոփոխություններ, որոնց կարգավորման առարկան որդեգրման ենթակա երեխաների, որդեգրել ցանկացող անձանց, ինչպես նաև որդեգրված երեխայի և որդեգրողի ճշգրիտ տեղեկատվության հավաքագրումն է և առանց ծնողական խնամքի մնացած երեխային դաստիարակության համար խնամատար ընտանիք տեղավորելու հետ կապված հարաբերությունների իրավական հիմքի ամրագրումը:

14. Զարգանում և ամրապնդվում է երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգը: Մարզպետարանների /Երևանի քաղաքապետարանի/ երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների գործառույթների ընդլայնման նպատակով մշակվել է բաժինների օրինակելի կանոնադրության նախագիծը, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման և զարգացման նպատակով Եվրոպական հանձնաժողովի «Աջակցություն Հայաստանում երեխաների խնամքի և պաշտպանության բարեփոխումների իրականացմանը» Տասիսի ծրագրի շրջանակներում իրականացվել են վերապատրաստման դասընթացներ երեխաների պաշտպանության համակարգի բոլոր մարմիններում և կառույցներում ներգրավված մասնագետների համար: Նշված ծրագրի շրջանակներում մարզպետարանների երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների հետ համատեղ կազմակերպվում են նաև հանդիպում-սեմինարներ համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության մարմինների համար: Սեմինարների նպատակն է խնամակալության և հոգաբարձության մարմիններին և հանձնաժողովների ներկայացուցիչներին ներկայացնել երեխաների իրավունքների ոլորտում իրականացվող բարեփոխումները, ինչպես նաև նպաստել համայնքների և մարզպետարանների երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների միջև համագործակցության ամրապնդմանը:

15. Վերապատրաստումներ են իրականացվել նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի հետ համատեղ կազմակերպված «Երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում և մանկատներում աշխատող մասնագետների վերապատրաստումների անցկացում» թեմայով:

16. Մոր և մանկան առողջության պահպանման խնդիրները կարևորված են ազգային մակարդակում և որպես գերակայություն արտացոլված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ, ռազմավարական և ծրագրային մի շարք փաստաթղթերում: Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հաշվարկային ցուցանիշի, տարածաշրջանում մանկական մահացությունների միտումների վերլուծությունը փաստում է, որ Հայաստանին հաջողվել է վերջին 15 տարվա ընթացքում 46 տոկոսով կրճատել մանկական մահացության ցուցանիշը: Ըստ միջազգային փորձագիտական գնահատականների, Հայաստանը ճանաչված է ԱՊՀ այն եզակի երկրներից մեկը, որին մանկական մահացության ցուցանիշի կրճատման առկա միտումների պահպանման դեպքում կհաջողվի հասնել 2015 թվականի համար սահմանված հազարամյակի նպատակներին: Այս ոլորտի ազգային ռազմավարությունը պետք է ուղղվի ունեցած հաջողությունների պահպանմանը և հետագա ներդրումների և զարգացումների ապահովմանը՝ որպես երեխաների առողջության բարելավման գրավական: Շարունակում են իրականացվել երեխաների մահացության, հիվանդացության և հաշմանդամության կանխարգելմանն ուղղված մի շարք ծրագրեր, այդ թվում ֆենիլկետոնուրիայի, հիպոթիրեոզի և լսողության նորածնային սկրինինգի իրականացման ծրագրերը, որոնք թույլ են տալիս դեռ վաղ հասակից ձեռնարկել միջոցառումներ այս երեխաների բուժման ուղղությամբ և կանխարգելել դրանցով պայմանավորված հաշմանդամությունը:

17. Այս տարի տպագրվել և բուժաշխատողներին է տրամադրվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 12.12.2008թ. N 1841-Ա հրամանով հաստատված «Առավել տարածված մանկական հիվանդությունների վարման» կլինիկական ստանդարտները (համառոտ՝ գործելակարգեր), Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 20.12.2008թ. N1984-Ա հրամանով հաստատված «Մանկական հիվանդությունների ինտեգրացված վարման» չափորոշիչները՝ նախատեսված առողջության առաջնային պահպանման համակարգի մանկաբույժների և ընտանեկան բժիշկների համար, 18.05.2007թ. N877-Ա հրամանով հաստատված և որպես երեխաների հիվանդանոցային բուժօգնության կազմակերպման որակական չափորոշիչ ճանաչված «Երեխաների հիվանդանոցային օգնության կազմակերպումը» գրպանի տեղեկատուն, ինչն անշուշտ, կխանգեցնի առողջության առաջնային պահպանման և մարզային հիվանդանոցային մակարդակներում բուժօգնության որակի զգալի բարելավմանը:

18. Վերջինիս միջին եռամյա ցուցանիշների համեմատությունը վկայում է, որ Հայաստանում վերջին 15 տարվա ընթացքում մայրական մահացության մակարդակը շարունակաբար իջել է: Մայրական մահացության Հայաստանի ցուցանիշն ավելի ցածր է ԱՊՀ և տարածաշրջանի երկրների միջին մակարդակից, սակայն 2 անգամ բարձր է եվրոպական երկրների համանուն ցուցանիշի միջին մակարդակից: Ուղեգրման համակարգի բարելավման, բարձր ռիսկի խմբի հղիների նախածննդյան խնամքի և ծննդօգնության ծառայությունների որակի և մատչելիության բարելավման դեպքում զգալիորեն կնվազեն մայրական մահացության դեպքերը: 2009 թվականի հուլիսի մեկից հանրապետությունում ներդրվեց ծննդօգնության պետական հավաստագրերի համակարգը, որի արդյունքում այժմ ունենք ծննդօգնություն իրականացնող ծառայությունների մատչելիություն և որակի զգալի բարելավում:

19. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ամրագրված է Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու կրթության իրավունքը: Հիմնական կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է, յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք:

20. 1999թ. Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովն ընդունել է «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որը հիմնվելով սահմանադրական դրույթների վրա, որոշակիորեն ուղղորդում է կրթության համակարգի զարգացումը: Համաձայն այս օրենքի, Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասսայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից: Հայաստանի կրթության համակարգի զարգացման քաղաքականությունն այսօր սերտորեն կապված է միջազգային կրթական հանրության հետ: Հայաստանն այսօր որդեգրել է միջազգային կրթական համակարգին ինտեգրվելու

քաղաքականություն, որը ենթադրում է կրթության կառուցվածքի և բովանդակության համապատասխանեցում ժողովրդավարական հասարակության ու շուկայական տնտեսության պահանջներին: Հատկապես ընդգրկուն է համագործակցությունը հանրակրթության ոլորտում, ուր անցում է կատարվում 12-ամյա միջնակարգ կրթակարգին:

21. Պետությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների համար՝ զարգացման շեղումները շտկելու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով: Համաձայն «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով: Նախարարության ռազմավարությունն այս բնագավառում ուղղված է մի կողմից հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավմանը, մյուս կողմից՝ այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը, ինչը հնարավորություն կտա աստիճանաբար բեռնաթափել հատուկ դպրոցները: Բարեփոխման ծրագրի արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն հասարակության, ծնողների, մանկավարժների, հատուկ վերականգնողական, առողջարարական ծառայությունների համակարգված համագործակցության միջոցով: Կարևորվում է նաև հանրակրթական դպրոցներում և համայնքներում հատուկ մանկավարժական, սոցիալական, հոգեբանական ծառայությունների ընդլայնումը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:

22. Ազգի ապագան բնորոշող հրատապ խնդիրների լուծումը իրականություն է դառնում անընդհատ կրթության համակարգի բոլոր օղակների աստիճանական զարգացման, նրանց ներդաշնակ փոխկապակցության միջոցով: Այդ համակարգի առաջին և կարևորագույն օղակը նախադպրոցական կրթությունն է, որի բովանդակությունը պլանավորվում է այնպես, որ նրա հիմքի վրա կառուցվեն անընդհատ կրթության համակարգի մյուս օղակները: Պետական քաղաքականությունը նախադպրոցական կրթության բնագավառում կառուցվում է ընտանիքի դերի առաջնայնության հիմքի վրա: Նախադպրոցական կրթության ոլորտում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության քաղաքականությունն ուղղված է առկա ներուժի պահպանմանը, դրանց զարգացման նախադրյալների ստեղծմանը և գործունեության ընդլայնմանը: Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացված հիմնական աշխատանքներն ուղղված են օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործմանը, կադրերի մասնագիտական կարողությունների զարգացմանը, նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքի բարելավմանը, ինչպես նաև նախադպրոցական ծառայությունների հնարավորին լայն շրջանների համար հասանելիության ապահովմանը:

Կարևորվում է նաև դաստիարակության համակարգի զարգացումը, ուսուցման ու դաստիարակության միասնականության ապահովումը: Այստեղ առանձնահատուկ շեշտադրում է արվել սովորողների համար ըստ հետաքրքրությունների գործունեություն ծավալելու հնարավորությունների ընձեռմանը և լրացուցիչ կրթության ապահովմանը:

23. Հաստատված ռազմավարություններին համապատասխան և օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով իրականացվում է նախադպրոցական ցանցի զարգացման փորձնական ծրագիրը, Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Ավագ դպրոցների արդյունավետության բարձրացման և որակի էապես բարելավման նպատակով հաստատվել է առանձին գործող ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը, ընդլայնվում է առանձին գործող ավագ դպրոցների ցանցը:

## IV. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2010 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

24. 2010թ. ընթացքում իրականացվելու են երեխաների իրավունքների պաշտպանության, նրանց կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ: Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում 2010 թ. տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումները բխում են երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունից՝ նրանց խնամքի, բուժման և դաստիարակության համար նպաստավոր պայմանների ստեղծման, ֆիզիկական և մտավոր բնականոն զարգացման, հոգեբանական վերականգնման և արդյունավետ սոցիալականացման նպատակով:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Հ/հ | Միջոցառման անվանումը | Պատասխանատու կատարողը | Ակնկալվող արդյունքները | Կատարման ժամկետը | ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի 8 մանկատանը կխնամվի 935 երեխա | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 2. | Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի շրջանակներում աջակցություն կտրամադրվի 40 շահառուի: | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 3. | Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ /բեռնաթափում/ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ծրագրի շրջանակներում ընտանիք կվերադառնա 40 երեխա, կկանխարգելվի 10 երեխայի մուտքը հաստատություններ | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 4. | Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության ծառայություններ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի երեխաների սոցիալական հոգածության 2 կենտրոններում 200 երեխայի կտրամադրվեն համապատասխան ծառայություններ | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 5. | Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայություններ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի | Խնամատար ընտանիքներում կիրականացվի 25 երեխայի խնամքը: | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապե |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | նախարարություն | | | տության պետական բյուջե |
| 6. | Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ 7 հաստատու-թյունում կիրականացվի  շուրջ 725 երեխայի խնամքը: | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 7. | Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից դժվար իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | «Հույսի կամուրջ» ՀԿ-ի Դիլիջանի, Իջևանի, Նոյեմբերյանի, Բերդի և նրանց հարակից գյուղերի հաշմանդամություն կամ սոցիալ-հոգեբանական խնդիրներ և հատուկ կարիքներ ունեցող շուրջ 600 երեխայի մատուցվող ծառայությունների համար կտրամադրվի աշխատավարձ: | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 8. | Երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կապահովվի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության 8 մանկատներում խնամվող երեխաների, տվյալները, որդեգրման ենթակա երեխաների և որդեգրողի թեկնածուների տվյալների մուտքագրումը /շուրջ 600 մուտքագրում/: | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 9. | Հայաստանի Հանրապետությունում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառման իրականացում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կապահովվի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառումը: | 2010թ. ընթացքում | ֆինանսավորում չի պահանջվում |
| 10. | Հայաստանի Հանրապետությունում «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգի» համաձայն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատ-կանող անձանց բնակարաններ տրա-մադրելու նպատակով կենտրոնացված հաշվառման իրականացում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կապահովվի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց բնակարաններ տրամադրելու նպատակով կենտրոնացված հաշվառումը: | 2010թ. ընթացքում | ֆինանսավորում չի պահանջվում |
| 11. | «Կյանքի դժվարին իրավիճակներում | ՀՀ աշխատանքի և | Կապահովվի «Կյանքի դժվարին իրավիճակներում | 2010թ. | Միջազգայի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | գտնվող երեխաների» տեղեկատվական համակարգի շահագործման և վարման նպատակով պետական աջակցություն «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին | սոցիալական հարցերի նախարարություն | գտնվող երեխաների» տեղեկատվական համակարգի շահագործումը: | ընթացքում | ն կազմակեր պություննե ր |
| 12. | Երաժշտական, գեղարվեստի և արվեստի դպրոցներում նպատակային պետպատ-վերի տեղադրում: Դպրոցներին պետական աջակցություն | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | ՀՀ 141 երաժշտական և արվեստի դպրոցների ազ-գային, փողային և լարային նվագարանների բաժին-ների 2443 սովորող կստանա ուսման վարձավճար-ների փոխհատուցում, ինչը կնպաստի գեղարվես-տական կրթության մատչելիության ապահովմանը, կրթական հաստատությունների պահպանմանը և մշակույթի ոլորտի հետագա մասնագետներով հա-մալրմանը | 2010թ. ընթացքում | Հայաստան ի Հանրապե տության պետական բյուջե |
| 13. | Միջոցառումների անցկացում երեխաների հանգիստը և ժամանցը բազմաբովանդակ անցկացնելու համար, այդ թվում՝ «Արտուտիկ» ամառային ստեղծագործական ճամբար / Ծրագիրը շարունակական է/: | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Շնորհալի երեխաներ ստեղծագործական կարողութ-յունների զարգացման և ամառային հանգստի բազ-մաբովանդակ կազմակերպման նպատակով Դիլիջա-նի Կոմպոզիտորների ստեղծագործական տանը կկազմակերպվի «Արտուտիկ» մանկապատանեկան ստեղծագործական ամառային ճամբարը, ուր կհանգստանան և վարպետության կատարելագործ-ման դասեր կստանան ՀՀ 10 մարզերի, Երևանի, Արցախի և Ջավախքի 55 շնորհալի երեխա | 2010թ. ընթացքում | Հայաստան ի Հանրապե տության պետական բյուջե |
| 14. | Պատանի ստեղծագործողների համար մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների կազմակերպում | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Պատանի ստեղծագործողների համար մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների կազմակերպ-մամբ կբացահայտվեն շնորհալի երեխաներ, որոնց հետագա ուսուցման գործընթացում և ստեղծագոր-ծական գործունեությանը կցուցաբերվի աջակցութ-յուն | 2010թ. ընթացքում | Հայաստան ի Հանրապե տության պետական բյուջե |
| 15. | Գեղարվեստական գրականության, մանկական գրադարանների զարգացման նպատակային ծրագրեր, մանկական գեղարվեստական գրքերի հրատարակում, գրադարանային ֆոնդի համալրում | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Մանկական գրականության հրատարակումը կնպաստի մանուկների աշխարհայացքի ձևավորմա-նը, հայրենասիրական դաստիարակությանը, ազգա-յին և համամարդկային արժեքների սերմանմանը, գրադարանների մանկական գրկանության համալր-մանը | 2010թ. ընթացքում | Հայաստան ի Հանրապե տության պետական բյուջե |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 16. | Մանկական կինոյի և թատրոնի զարգացման նպատակային ծրագրեր, այդ թվում՝ Մանկապատանեկան թատրոնների «Նռան հատիկ» հանրապետական փառատոն Մանկական կինոֆիլմերի և տեսաֆիլմերի նկարահանում /«Պետական աջակցություն կինոնկարների արտադրությանը» ծրագիր | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Մանկապատանեկան թատրոնների «Նռան հատիկ» հանրապետական փառատոնի անցկացումը կնպաստի մանկապատանեկան թատրոնի զարգացմանը, շնորհալի երեխաների հայտնաբերմանը և ստեղծագործական գործունեության խթանմանը Մանկական մուլտֆիլմերի նկարահանումը կնպաստի մանկական կինոյի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը և աշխարհայացքի ընդլայնմանը, ժամանցի և հանգստի կազմակերպմանը | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 17. | Հայաստանի և օտարերկրյա երեխաների համար համատեղ միջոցառումների անցկացում /համերգներ, ցուցահանդեսներ, փոխայցելություններ/ ՀՀ մշակույթի նախարարությունում ստեղծվել է ՀՀ շնորհալի երեխաների տեղեկատվական բանկ, որտեղ ներառվել է ՀՀ մարզերից և Երևան քաղաքից երաժշտական, արվեստի և գեղարվեստի 97 դպրոցների 400 երեխայի վերաբերյալ տեղեկույթ: | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Տեղեկատվական բանկում ներառվել է ՀՀ մարզերից և Երևան քաղաքից երաժշտական, արվեստի և գեղարվեստի 97 դպրոցների 400 երեխայի վերաբերյալ տեղեկույթ: | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 18. | Հանրապետական և միջազգային մրցույթ-փառատոների, ցուցահանդեսների անցկացում | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Մրցույթ-փառատոների, ցուցահանդեսների անցկացում կնպաստի պատանի ստեղծագործողների կարողությունների զարգացմանը, փորձի փոխանակմանը և նրանց աշխատանքների ներկայացմանը հանրությանը: | 2010թ ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 19. | Պետական աջակցություն սոցիալապես անապահով երեխաներին մշակութային մասնագիտական ուսուցման և գեղագիտական դաստիարակության ասպարեզում՝ Երևանի 5 և Վանաձորի մաս-նաճյուղի 2 գիշերօթիկ հատուկ դպրոցներում: | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | ՀՀ մշակույթի նախարարության «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունքում Երևանի 5 և Վանաձորի մասնաճյուղի 2 գիշերօթիկ հատուկ դպրոցներում հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով 470 երեխաներ կստանան արվեստների և արհեստների ուսուցում: | | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **20.** | Իրավախախտումներ կատարած անչափահասների համար հատուկ հաստատություններում մշակութային մասնագիտությունների ուսուցման կազմակերպում և այդ նպատակով հատուկ ստեղծագործական կենտրոնի հիմնում | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | ՀՀ մշակույթի նախարարության «Իրավախախտում կատարած անչափահասների հատուկ ստեղծագոր-ծական կենտրոնը» ՊՈԱԿԻ (գործում է 2007 թ.) գոր-ծունեության արդյունքում քրեակատարողական հիմնարկներում և դրանցից դուրս իրավախախտում կատարած անչափահասների համար կկազմակրեպ-վի արվեստի և արհեստների մասնագիտական ու-սուցում: Կենտրոնում ուսուցմանը կմասնակցեն է 90 երեխա: | 2010թ ընթացքում | Հայաստան ի Հանրապե տության պետական բյուջե |
| **21.** | Մոր և մանկան առողջության պահպանման պետական նպատակային ծրագիր:Պետության կողմից երաշխավորված երեխաների անվճար բուժօգնություն և սպասարկում.<br><br>• 0-18 տարեկան երեխաների ամբուլատոր պոլիկլինիկական բուժօգնություն և սկրինինգ<br>• 0-7 տարեկան և սոցիալապես անապահով ու հատուկ խմբերում ընդգրկված երեխաների հիվանդանոցային բուժօգնություն<br>• երեխաների ստոմատոլոգիական կանխարգելման / 6 տարեկան և 12 տարեկան/ տարեկան ծրագիր<br>• 0-8 տարեկան և սոցիալապես անապահով ու հատուկ խմբերում ընդգրկված երեխաների ստոմատոլոգիական մասնագիտացված բուժօգնություն<br>• Նորածնային սկրինինգի ծրագիր<br>• 15 տարեկան աղջիկների վերարտադրողական առողջության գնահատման ծրագիր: | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Մինչև 18 տարեկան երեխաների հիվանդությունների կանխարգելում և բուժում՝ պետական նպատակային ծրագրերի շրջանակներում (շուրջ 720000երեխա կստանա ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնություն, 31360՝ հիվանդանոցային)<br><br>Շուրջ 42909 երեխա կընդգրվի ստոմատոլոգիական կանխարգելման և մասնագիտացված բուժօգնության ծրագրում<br>Շուրջ 40000 նորածիններ կներգրավվեն սկրինինգային ծրագրում<br>12000 15 տարեկան աղջիկներ կընդգրկվեն վերարտադրողական առողջության գնահատման ծրագրում | 2004-2015թթ<br><br>2010թ ընթացքում<br><br>2010թ ընթացքում<br><br>2010թ ընթացքում<br><br>2010թ ընթացքում<br><br>2010թ ընթացքում<br><br>2010թ ընթացքում | Հայաստան ի Հանրապե տության պետական բյուջե |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 22. | Երեխաների անհետաձգելի հիվան-դանոցային բուժօգնության ծառայության բարելավման ծրագիր | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | 4500 երեխաների անհետաձգելի բուժման ապահովում | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 23. | Երեխաների վերականգնողական բուժօգնության բարելավման ծրագիր | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Հաշմանդամ երեխաների վերա-կանգնողական բուժման ապա-հովում համապա-տասխան բժշկա-կան կենտրոն-ներում և առողջարաններում (1500 երեխա) | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 24. | Կրծքով սնուցման խրախուսման ծրագիր | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Բ/ա գիտելիքների բարձրացում, «Մանկանը բարեկամ ծննդատների» և «Մանկանը բարեկամ պոլիկլինիկաների» ցանցի ընդլայնում 10%-ով | 2010թ. ընթացքում | Միջազգային կազմակերպություն |
| 25. | Մորից երեխային ՄԻԱՎԻ փոխանցման կանխարգելման ծրագիր | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Բուժաշխատողների գիտելիքների բարձրացում (շուրջ 50 բուժաշխատող կվերապատրաստ-վի ծրագրի շրջանակներում) | 2010թ. ընթացքում | Միջազգային կազմակերպություն |
| 26. | «Մանկական հիվանդությունների ինտեգրացված վարում» ԱՀԿ / ՅՈՒՆԻՍԵՖ ռազմավարության ներդրման ծրագիր | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | ԱԱՊ բուժհաստատու-թյունների անձնակազմի 35% և ստացիոնարների բուժանձնակազմի 45% կանցնեն համապատասխան վերապատրաստումներ և մինչև 5 տարեկան երեխա-ների առավել տարածված հիվանդությունների վարումը կիրականացվի համաձայն ստանդարտ ուղեցույցների | 2010թ. ընթացքում | Միջազգային կազմակերպություն |
| 27. | Նորածինների խնամքի և ինտենսիվ հսկողության բարելավման ծրագիր | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Ծննդատների առնվազն 20%-ում, նորածիններին սպասարկող բժշկական անձնակազմը կկիրառի ապացուցողական բժշկության հիմքի վրա մշակված կլինիկական ուղեցույցներ: | 2010թ. ընթացքում | Միջազգային կազմակերպություն |
| 28. | Վաղ հասակի երեխաների սնուցման վիճակի բարելավման ծրագիր | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | 0-5 տարեկան երեխաների սնուցման վերաբերյալ բուժաշխատողների գիտելիքների բարձրացում | 2010թ. ընթացքում | Միջազգային կազմակերպություն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 29. | «Դարձնենք հղիությունն անվտանգ» ԱՀԿ /ՅՈՒՆԻՍԵՖ ծրագիր | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Ռեպրոդուկտիվ տարիքի կանանց նախածննդյան խնամքի, ծննդօգնության և հետծննդյան խնամքի վերաբերյալ 50-100 բուժաշխատողների գիտելիքների բարձրացում՝ ապացուցողական բժշկության սկզբունքներին համապատասխան | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե միջազգային կազմակերպություն |
| 30. | «Ներառական կրթություն» ծրագրի իրականացում 49 դպրոցներում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների համար կապահովվեն կրթության մատչելիություն և հավասար պայմաններ, մտավոր և ֆիզիկական թերություններով երեխաների համար 49 հանրակրթական դպրոցներում կիրականացվի ներառական կրթություն | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, Միջազգային և հասարակական կազմակերպություններ |
| 31. | «Հատուկ դպրոցների հզորացում» ծրագրի իրականացում 2 հատուկ հաստատություններում և Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Կբացահայտվեն ու կգնահատվեն դպրոց հաճախող երեխաների ֆիզիկական, մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունները, կվերապատրաստվեն 2 հատուկ դպրոցների մանկավարժներ | 2010թ. ընթացքում | Միջազգային և հասարակական կազմակերպություններ |
| 32. | Նախադպրոցական կրթության զարգացման ծրագրի իրականացում՝ <br>• 3-5 տարեկանների նախադպրոցական կրթության չափորոշիչների մշակում և հրատարակում, <br>• փորձնական ծրագրի իրականացում 2 մարզերում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Կապահովվի նախադպրոցական կրթության մատչելիությունը, հանրապետության 2 մարզերում կներդրվեն այլընտրանքային ծառայությունների փորձնական ծրագիր | 2010թ. ընթացքում | Միջազգային և հասարակական կազմակերպություններ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 33. | Դպրոցական օլիմպիադայի կազմակերպում (14 առարկաներից հանրապետական օլիմ պիադաների կազմակերպում և 6 առարկայից միջազգային օլիմպիադայի մասնակցություն) | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Հանրակրթական դպրոցների աշակերտների համար կկազմակերպվեն հանրապետական օլիմպիադաներ 14 առարկաներից,իսկ լավագույնները կմասնակցեն 6 առարկաներից միջազգային օլիմպիադաների | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 34. | «Հանդուրժողականության ուսուցում» ձեռնարկի մշակում միջին դպրոցի համար, դասղեկների վերապատրաստման դասընթացների անցկացում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Միջին դպրոցի համար կմշակվի «Հանդուժողականության ուսուցում» ձեռնարկը, կվերապատրաստվեն այս թեմաները դասավանդող ուսուցիչները | 2010թ. ընթացքում | ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակ |
| 35. | Երեխայի իրավունքների լուսաբանում հանրակրթական դպրոցների դաստիարակության գծով փոխտնօրենների և դասղեկների վերապատրաստման դասընթացներում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Հանրակրթական դպրոցների ղեկավար կադրերի և մանկավարժական կազմի վերապատրաստման դասընթացների ընթացքում կլուսաբանվեն երեխայի իրավունքներին առնչվող թեմաներ | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, Հասարակական կազմակերպություններ |
| 36. | Աշակերտական ինքնակառավարման զարգացման ծրագրի շրջանակներում «Օրինակելի դպրոց» փորձնական ծրագրի իրականացում 40 դպրոցներում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | «Օրինակելի դպրոց» փորձնական ծրագիրը կիրականացվի հատուկ չափորոշիչներով ընտրված 40 դպրոցներում | 2010թ. ընթացքում | ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ |
| 37. | «Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի» ձեռնարկի մշակում, վերապատրաստման դասընթացների անցկացում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Կմշակվի «Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի» ձեռնարկը, հակակոռուպցիոն թեմաների շուրջ կվերապատրաստվեն դասավանդող ուսուցիչները | 2010թ. ընթացքում | Միջազգային և հասարակական կազմակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | երպություւններ |
| 38. | Հանրակրթական դպրոցների 8-9-րդ դասարաններում «Առողջ ապրելակերպ» դասընթացի իրականացում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Հանրապետության դպրոցականներին կուսուցանվի առողջ ապրելակերպի գիտելիքներ, սովորողները ձեռք կբերեն կյանքի հմտություններ | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ |
| 39. | Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Ամառային ճամբարներում ու հանգստյան տներում կկազմակերպվի շուրջ 3000 երեխաների ամառային հանգիստը | հուլիս-օգոստոս | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 40. | Դպրոցականների սպարտակիադաների կազմակերպում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Հանրակրթական դպրոցների շուրջ 4500 աշակերտների համար կանցկացվենամենամյա հանրապետական սպորտային խաղեր 4 մարզաձևերով | 2010թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 41. | Դպրոցականների գեղարվեստական ստեղծագործության փառատոնի կազմակերպում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Հանրապետության բոլոր մարզերում կկազմակերպվեն դպրոցականների գեղագիտական ստեղծագործության մրցույթ-փառատոներ,, նկարչական հանրապետական ու միջազգային մրցույթներ | 2010թ. ընթացքում | Միջազգային և հասարակական կազմակերպություններ |
| 42. | Հայաստանի Հանրապետության ոստիկանության ԱԳ ծառայության և «Պրոջեքթ հարմոնի» միջազգային հասարակական կազմակերպության հետ | Հայաստանի Հանրապետության ոստիկանություն | Աչափահասների կողմից կատարվող իրավախախտումների և հանցագործությունների թվի նվազեցում , իրվախախտում կամ հանցագործություն կատարած անչափահասների | 2009-2010թթ | Միջազգային կազմակերպությ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | համատեղ իրականացվող համայնքային վեց / Երևան, Վանաձոր, Գյումրի Թումանյան, Իջևան, Ճամբարակ/ վերականգնողական կենտրոններում աշխատանքների շարունակում: | | սոցիալ-հոգեբանական վերականգնում, վերադաստիարակում | | ւններ |
| 43. | Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Հայաստանի Հանրապետության երեխաների իրավունքների պաշտպանության Ազգային հանձնաժողովի պատասխանատուների, միջազգային կազմակերպությունների հետ համատեղ ստեղծված աշխատանքային խմբի կողմից 14-18 տարեկան արական սեռի դժվար դաստիարակվող, իրավախախտ և հատուկ դաստիարակության կարիք ունեցող անչափահասների համար հատուկ ռեժիմային ուսումնադաստիարակչական հաստատությունների ստեղծման նպատակով աշխատանքների շարունակում: | Հայաստանի Հանրապետության ոստիկանություն | Հանցագործություն կատարած, ինչպես նաև հաշվառման մեջ գտնվող դժվար դաստիարակվող անչափահասների վարքի շեղումների շտկում, մասնագիտական հմտությունների զարգացում՝ քրեակատարողական հիմնարկներ նրանց մուտքը կանխարգելելու նպատակով: | 2010թ. սեպտեմբեր | Միջազգ ային կազմակ երպությո ւններ |

Հավելված N 6

## ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ2010 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

### *ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ*

Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2010թ. տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Տարեկան ծրագիր) մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5.1 հոդվածին համապատասխան:

Ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 3-ի արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015թթ. ռազմավարության» հիմնական ուղղությունները, ինչպես նաև շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների կողմից ներկայացված առաջարկությունները: Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրի, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի և «Հաշմանդամների իրավունքների և հասարակության կյանքում նրանց լիարժեք մասնակցության ապահովմանն ու կյանքի որակի բարելավմանն ուղղված Եվրախորհրդի 2006-2015 թթ. գործողությունների ծրագրի» դրույթներին:

*Տարեկան ծրագրի հիմնական խնդիրներն են՝*

- հաշմանդամություն ունեցող անձանց համար կենսագործունեության բոլոր ոլորտներում հավասար պայմանների ստեղծմանն ու հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը,
- հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային և մարզային հանձնաժողովների աջակցությամբ հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը
- հաշմանդամների սոցիալական ներառման և սոցիալական պաշտպանության հարցերին առնչվող օրենսդրության կատարելագործումը,
- հաշմանդամների բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների ապահովումը,
- հաշմանդամների խնամքի, բժշկական և սոցիալական սպասարկման կազմակերպումը,
- հաշմանդամների կրթության, մասնագիտական ուսուցման կազմակերպումն ու զբաղվածության խթանումը,
- հաշմանդամների ներգրավումը մարզական և մշակութային ծրագրերում,
- հաշմանդամների հարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնումը,
- պետության և հասարակության ուշադրության բևեռումը հաշմանդամների հիմնախնդիրների վրա:

### *ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ*

Հաշմանդամության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը, հիմնական մոտեցումները և պետական նպատակային ծրագրերը ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու հավասար պայմանների և հավասար հնարավորությունների ապահովմանը:

Շարունակվել են իրականացվել աշխատանքներ 2005թ. նոյեմբերի 3-ին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թթ. ռազմավարության» դրույթների իրականացման ուղղությամբ:

Հաշմանդամների սոցիալական պաշտպանության ոլորտում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը համագործակցում է այլ նախարարությունների, գերատեսչությունների, հաշմանդամների հարցերով զբաղվող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ:

Կազմակերպվել են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների, նրա վավերացման հետ կապված հարցերի, ինչպես նաև հաշմանդամների հիմնահարցերի լայն քննարկումներ:

Հաշմանդամներին ծառայություններ տրամադրող համայնքային ցերեկային կենտրոնների ստեղծման նպատակով պետական աջակցություն է ցուցաբերվում «Առաքելություն Հայաստան», «Հույսի կամուրջ» և «Փրկություն» հասարակական կազմակերպություններին:

2008 թվականի ընթացքում 13637 հաշմանդամ ապահովվել է պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով՝ այդ թվում տրամադրվել է լսողական սարք՝ 1164 հատ, որից 226-ը՝ եվրոպական արտադրության, հաշմանդամի նստասայլակ՝ 450 հատ /ինչպես նաև 31 հատ միջազգային կազմակերպությունից ստացած/, վերին և ստորին վերջույթների պրոթեզներ՝ 796, սեղմիրան՝ 567, աղեկապ՝ 261, օրթեզ՝ 358, սուպինատոր՝ 442, ռեկլինատոր՝ 20, հենակ՝ 942, ծեռնափայտ՝ 449, օրթոպեդիկ կոշիկ՝ 1709 զույգ, պրոթեզի կոշիկ՝ 1857 զույգ, կրծագեղձի պրոթեզ 203, փոքր տրամաչափի սայլակ 7, ծնկակալ 12, քայլակ 88, ծայնաստեղծ սարք ստացել է 100 հաշմանդամ, 50 հաշմանդամի կատարվել է աչքի պրոթեզավորում, կատարվել է պարագաների վերանորոգում՝ 1123 հատ:

Միջազգային և հասարակական կազմակերպությունների միջոցով 2008 թվականին ձեռք են բերվել 222 հատ «Օտիկոն» ֆիրմայի թվային լսողական ապարատ, որով պրոթեզավորվել են 116 երեխա:

2008 թվականի ընթացքում «Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոնում և «Սթրես» հոգեկան առողջության վերականգնողական կենտրոնում բուժվել և վերականգնման կուրս են անցել համապատասխանաբար 631 և 413 հիվանդ:

«Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակում 2008 թվականից շարունակվել է իրականացվել «Ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի պատրաստում և «Խոսող գրքերի» ձայնագրության ծառայությունների ձեռքբերում» ծրագիրը: Տպագրվել և տեսողությունից հաշմանդամներին տրամադրվել են հատուկ տառատեսակներով գրքեր, տետրեր, իրականացվել են «Խոսող գրքերի» ձայնագրություններ: Տարվա համար նախատեսված 11,721,0 հազար դրամ գումարը իրացվել է ամբողջությամբ, ինչը հնարավորություն է տվել տեսողությունից զրկված հաշմանդամներին ինչպես գրադարաններում, այնպես էլ տնային պայմաններում ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն:Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովը քննարկել է նմանատիպ մարզային հանձնաժողովների աշխատանքների գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների ապահովման գործընթացի, հաշմանդամների զբաղվածության խնդիրների, իրականացվող ծրագրերի և նախատեսվող միջոցառումների, ինչպես նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիայի վավերացման վերաբերյալ հարցերը:

Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են հաշմանդամների համար հավասար պայմաններ և հավասար հնարավորություններ ապահովելու հարցերը:

Այդ ուղղությամբ աշխատանքներ են իրականացվել հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովների հետ, տեղերում կազմակերպվել են ուսումնասիրություններ և քննարկումներ:

Հայտարարվել է հաշմանդամների խնդիրների իրազեկման միամսյակ, որի շրջանակներում հրավիրվել են մամուլի ասուլիսներ, կազմակերպվել է ոլորտում իրականացվող ծրագրերի և աշխատանքների ցուցահանդես, տեղի են ունեցել հանդիպումներ համալսարանների ուսանողների հետ, հայտարարվել է մրցույթ հաշմանդամության թեմայով լավագույն լրագրողական աշխատանքի համար, կազմակերպվել է արվեստի աշխատանքների ցուցահանդես, որտեղ ներկայացվել են բոլոր մարզերի հաշմանդամ երեխաների և երիտասարդների աշխատանքները: Միամսյակի ընթացքում կազմակերպվել է լրատվամիջոցների միջև ֆուտբոլի մրցաշար՝ «Ֆուտբոլը հանուն հավասար հնարավորությունների» խորագրով: Մրցաշարի նպատակը եղել է հաշմանդամ անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման գաղափարը:

Հաշմանդամության հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացման նպատակով հեռուստատեսությամբ պարբերաբար ցուցադրվել են հասարակական կազմակերպությունների պատրաստած սոցիալական տեսահոլովակներ:

Նման աշխատանքներն ունեն շարունակական բնույթ:

Հաշմանդամների համար մատչելի միջավայր ստեղծելու գործընթացը խթանելու, համայքի կյանքում հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավելու նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագրի հետ համատեղ հայտարարել է «Մատչելի համայնք» մրցույթը: Մրցույթի ամփոփման արդյունքում լավագույն են ճանաչվել Դիլիջանի և Գյումրու համայնքները:

Տարեցտարի ավելացվում են հատկացվող միջոցները պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական տեխնիկական պարագաների տեսականու ընդլայնման, որակի բարձրացման, ինչպես նաև երեխաների ու երիտասարդ հաշմանդամների համար եվրոպական արտադրության լսողական ապարատների ձեռքբերման համար:

2008թ. հաշմանդամներին հատկացվել է 13637 պրոթեզաօրթոպեդիկ պարագա, 481 սայլակ, 1265 լսողական սարք / այդ թվում 226 եվրոպական արտադրության/, ինչպես նաև այլ վերականգնողական պարագաներ: 2009 թվականին շարունակվում են իրականացվել նշված ծրագրով նախատեսված աշխատանքները:

Իրականացվում են հասցեական ծրագրեր՝ ուղղված որոշակի խնդիրներ ունեցող հաշմանդամների հասարակություն ինտեգրելուն:

Շարունակվում են աչքի պրոթեզավորման և ծայնաստեղծ սարքերով ապահովման ծրագրերը: 2009 թվականից ավելացվել են նշված ծրագրերի ծավալները, ծայնաստեղծ սարքերով ապահովման ծրագիրը՝ 20 տոկոսով, իսկ աչքի պրոթեզավորման ծրագիրը՝ 50 տոկոսով:

Տեսողության խնդիրներ ունեցող անձանց հասարակություն ինտեգրելու, նրանց համար, առանց այլ անձի օգնության, սովորելու և աշխատելու համար պայմաններ ապահովելու նպատակով, 2008 թվականից պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվում է «Արև համակարգ» ծրագիրը, որն այդ հաշմանդամների համար նախատեսում է նշված համակարգով համակարգչային ուսուցում և համակարգչային տեխնիկայով ապահովում: Այդ ծրագրում ընդգրկվում է տարեկան 20 հաշմանդամ:

Շարունակվում է տեսողության խնդիրներ ունեցող հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով /Բրայլյան/ գրքերի տպագրության, տետրերի պատրաստման, «Խոսող գրքերի» ծայնագրության ծրագիրը: 2009թ. համար նշված ծրագրի ծավալները պահպանվել են:

Հաշմանդամների բժշկասոցիալական վերականգնումն իրականացվում է «Արթմեդ» բուժվերականգնողական կենտրոնում, «Սթրես-կենտրոն» ՓԲԸ-ում, ինչպես նաև Միջազգային Կարմիր խաչի հետվնասվածքային վերականգնողական, Գյումրու վերականգնողական, Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական կենտրոններում, «Օշական» մանկական վերականգնողական կենտրոնում, «Արարատ» մոր և մանկան կենտրոններում և այլն:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», «Կրթության մասին» և «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքները կանոնակարգում են հաշմանդամների և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց կրթության հարցերը:

2008-2009 թվականներին շարունակվել են աշխատանքները հատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար նախատեսված միջոցառումների և ներառական կրթության ընդլայնման և բարելավման ուղղությամբ: 2009 թվականին ներառական կրթություն է իրականացվում հանրապետության 30 նախադպրոցական և 26 հանրակրթական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև մեկ հատուկ կրթահամալիրում և մեկ քոլեջում անվճար հիմունքներով իրականացվում է նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության ապահովման ծրագիր՝ հիմնական ընդհանուր կրթության հիմք չպահանջող մասնագիտություններով:

Ապահովվում է անվճար հիմունքներով կրթությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, առնվազն անցումային միավոր ստացած հաշմանդամների, ինչպես նաև ուսման ընթացքում հաշմանդամ դարձած անձանց համար:

Հաշմանդամների զբաղվածության ապահովման խնդիրը շարունակում է մնալ սոցիալական ոլորտի դժվար լուծելի հիմնախնդիրների շարքում: «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում հաշմանդամներն ամրագրվել են որպես աշխատաշուկայում անմրցունակ խումբ և, որպես այդպիսիք, նրանց համար ստեղծվել են լրացուցիչ երաշխիքներ:

Վիճակագրական տվյալների համաձայն՝ 2009թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում հաշվառված 170950 հաշմանդամներից 64,5%-ը աշխատանքային տարիքի են, որոնցից միայն 8% է զբաղված: Վերջին երեք տարիների ընթացքում զբաղվածության կենտրոնների կողմից աշխատանքի է տեղավորվել 192 հաշմանդամ, որից 96-ը իրականացվող ծրագրերի արդյունքում: Մասնագիտական ուսուցման արդյունքում աշխատանքի են տեղավորվել «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության մարզային և տարածքային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրող հաշմանդամների 30%-ը:

Հաշմանդամների աշխատանքային ունակությունների վերականգնման և զբաղվածության ապահովման նպատակով, բնակչության զբաղվածության ամենամյա պետական ծրագրի շրջանակներում իրականացվում են հետևյալ ծրագրերը՝ խորհրդատվություն, հաշմանդամների մասնագիտական ուսուցում, աշխատանքային ունակությունների վերականգնում, աշխատաշուկայում անմրցունակ խմբերին աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար հաշմանդամներին ֆինանսական աջակցության տրամադրում:

Այս ծրագրերը դեռևս բավարար չեն լուծելու հաշմանդամների զբաղվածության հիմնախնդիրները: Հաշմանդամների աշխատանքային կարողությունների գնահատման, աշխատատեղերի հարմարեցման գործընթացը բարելավելու նպատակով, սկսվել են աշխատանքներ հաշմանդամների զբաղվածության ապահովման նոր մեխանիզմների ներդրման ուղղությամբ:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագրի աջակցությամբ «Հայաստանի կույրերի միավորում» հ/կ-ի էջմիածնի ուսումնաարտադրական կազմակերպությունում և ճամբարակի «Աստղացոլք» հաշմանդամ երեխաների ծնողների հ/կ-ում ստեղծվել են փորձնական սոցիալական ձեռնարկություններ, որտեղ աշխատում են 13 հաշմանդամություն ունեցող անձինք:

Սոցիալական ձեռնարկությունների հիմնումը ուղղված է մի կողմից հաշմանդամ անձանց սոցիալական խնդիրների լուծմանը ու նրանց համար հնարավորինս հավասար պայմանների ապահովմանը, մյուս կողմից նրանց աշխատանքային ներուժը հասարակությանը ի շահ ներդնելուն:

Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը խթանելու նպատակով, ոլորտի հասարակական կազմակերպությությունների ակտիվ մասնակցությամբ, կազմակերպվել է աշխատատեղերի տոնավաճառ հաշմանդամների համար:

Սկսվել են աշխատանքներ հաշմանդամության սահմանման եվրոպական՝ աշխատունակության կորստի աստիճանը սահմանող մոդելին անցնելու ուղղությամբ: Ստեղծված է աշխատանքային խումբ, մշակվում են հայեցակարգային մոտեցումներ:

Հաշմանդամների սոցիալական պաշտպանության բնագավառում կարևոր տեղ ու դեր ունի հաշմանդամներին խնամքի և սոցիալական սպասարկման տրամադրման ծառայությունների համակարգը:

Հաշմանդամների խնամքը և սոցիալական սպասարկումը իրականացվում է ինչպես շուրջօրյա խնամքի հաստատություններում, այնպես էլ տնային պայմաններում: Սպասարկման և խնամքի որակը ապահովելու, ինչպես նաև տրամադրվող ծառայությունները պետական չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով, հաշմանդամների խնամքը և սոցիալական սպասարկումն իրականացնող կազմակերպությունների գործունեությունը լիցենզավորվում է:

2008թ տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում իրականացվել են որոշակի աշխատանքներ հաշմանդամություն ունեցող անձանց համար հնարավորինս հավասար պայմաններ ապահովելու նպատակով: Շուրջ 19000 հաշմանդամ ստացել է անհրաժեշտ բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնողական ծառայություններ, 30000-ից ավել՝ բժշկական օգնության և սպասարկման, իսկ շուրջ 3000 հաշմանդամ՝ տնային պայմաններում և շուրջօրյա հաստատություններում խնամքի ու սոցիալական սպասարկման ծառայություններ: Իրականացված միջոցառումները նպաստել են հաշմանդամներին հասարակություն ներառելու գործընթացի խթանմանը:

## ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2010 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ինչպես անցած տարիներին, այնպես էլ 2010թ. իրականացվելու են հաշմանդամների սոցիալական պաշտպանության և նրանց կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ:

Հաշմանդամների սոցիալական պաշտպանության ոլորտում 2010թ. տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումները բխում են հաշմանդամների իրավունքների ու շահերի պաշտպանությունից, հաշմանդամներին հասարակություն ինտեգրելու, նրանց համար հնարավորինս հավասար պայմաններ ստեղծելու և հավասար հնարավորություններ ապահովելու, հաշմանդամների բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնողական գործընթացն առավելագույնս արդյունավետ իրականացնելու, հաշմանդամ երեխաների ներառական կրթության ու հաշմանդամների զբաղվածության խնդիրների լուծման անհրաժեշտությունից:

Իրականացվելու են աշխատանքներ հաշմանդամների հիմնախնդիրը կանոնակարգող ազգային օրենսդրությունը ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովը հետևողական աշխատանքներ է իրականացնելու հաշմանդամ անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Ավելի է ընդլայնվելու համագործակցությունը հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

Հաշմանդամների սոցիալական պաշտպանությանն ուղղված 2010 թվականի համար նախատեսված միջոցառումներն իրականացվելու են 9 հիմնական ուղղություններով (միջոցառումների ցանկը կցվում է):

## ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

| հ/հ | Միջոցառման անվանումը | Պատասխանատու կատարողը | Կատարման ժամկետը | Ֆինանսավորման աղբյուրը | Ակնկալվող արդյունքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ** | | | | |
| | Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները կանոնակարգող ՀՀ օրենսդրությունը ՄԱԿ-ի ընդունած «Հաշմանդամ անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու ուղղությամբ աշխատանքներ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով, հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում | Հաշմանդամների իրավունք-ների պաշտպանության , նրանց համար հավասար պայմանների ստեղծման ու հավասար հնարավորություն-ների ապահովման սկզբունքների վրա հիմնված և համապատասխան մեխանիզմներ ապահովող օրենսդրական դաշտ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1.1 | «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015թթ. ռազմավարության» (մշակվող` Սոցիալական պաշտպանության ոլորտի կայուն զարգացման ռազմավարության շրջանակներում մշակվող հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ռազմավարության) դրույթների ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, այլ շահագրգիռ նախարություններ և գերատեսչություններ, հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե` համապատասխան ծրագրերի համար նախատեսված ծավալներով, դոնոր ազմակերպութ-յուններ | Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտ-պանվածության բարելավում, հասարակական կյանքին մաս-նակցության խթանում, հաշ-մանդամ երեխաների համա-պատասխան որակյալ և մատ-չելի կրթության ապահովում, հաշմանդամների զբաղվածու-թյան և սոցիալական ինտեգր-ման մակարդակի բարձրա-ցում, մատուցվող ծառայու-թյունների մատչելիության ապահովում, |
| 1.3 | Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի աշխատանքների ապահովում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում | Հաշմանդամների իրավունք-ների պաշտպանություն, հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովում |
| 1.4 | Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանությանը, նրանց համար հավասար պայմանների ստեղծմանն ու հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված միջոցառում-ների իրականացում, քննարկումների, կլոր սեղանների կազմակերպում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով, Երևանի քաղաքապետարան, ՀՀ մարզպետարաններ (համաձայնությամբ) | Տարվա ընթացքում | Դոնոր կազմակեր-պություններ | Հաշմանդամների սոցիալական ինտեգրում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1.5 | Հաշմանդամ անձանց հիմնախնդիրների լուսաբանում, գրքույկների, ամսագրերի, մեթոդական ուղեցույցների տպագրում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հաշմանդամ անձանց հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե / 2000.0 հազ. դրամ- Հանրային իրազեկ-ման միջոցառումներ» ծրագրի շրջանակնե-րում/, դոնոր կազ-մակերպություններ | Հասարակության իրազեկության բարձրացում |
| 2 | **Հաշմանդամների համար հավասար և մատչելի պայմանների ապահովում** | | | | |
| 2.1 | Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայր ստեղծելուն ուղղված միջոցառումների կազմակերպում և իրականացում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Հաշմանդամություն ունեցող անաձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով Երևանի քաղաքապետարան ՀՀ մարզպետարաններ Հաշմանդամների հիմնահար-ցերով զբաղվող հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | Տարվա ընթացքում | Դոնոր կազմա-կերպություններ | Հաշմանդամների համար հնարավորինս անխոչընդոտ միջավայրի ապահովում |
| 2.2 | Հաշմանդամների համար մատչելի պայմանների ապահովման նպատա-կով, նախագծային փաթեթների մշակ-ման հիմք հանդիսացող ճարտարապե-տահատակագծային առաջադրանքնե-րում, որպես պարտադիր պայման, ճարտարաշինարարական նախագծերի համաձայնեցում | Երևանի քաղաքապետարան ՀՀ մարզպետարաններ | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում | Հաշմանդամների կարիքներին համապատասխան ճարտարաշինարարական նախագծերի մշակում |
| 3 | **Հաշմանդամների կրթության և մասնագիտական ուսուցման ծրագրեր** | | | | |
| 3.1 | Հանրապետության 32 նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառական | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | Տարվա ընթացքում | Դոնոր կազմակերպություննե ր | 434 երեխայի կրթության կազմակերպում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կրթության իրականացում | | | | |
| 3.2 | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպում 25 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>Երևանի քաղաքապետարան<br>ՀՀ մարզպետարաններ | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 1583703.6 հազ. դրամ | 2600 երեխայի կրթության կազմակերպում |
| 3.3 | Հանրապետության 49 հանրակրթական դպրոցներում ներառական կրթության իրականացում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>Երևանի քաղաքապետարան<br>ՀՀ մարզպետարաններ | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե, ներառական կրթու-թյան ծրագրի շրջանակներում: Մեկ կրթահամալիրի հաշվարկով` 45342 հազ. դրամ: | 750 երեխայի համար ներառական կրթության ապահովում |
| 3.4 | Երևան քաղաքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող դպրոցական տարիքի երեխաների մասին տեղեկատվության հավաքագրում, գնահատման կենտրոնի կողմից տրված եզրակացությունների և վկայագրերի հիման վրա վերլուծության իրականացում | Երևանի քաղաքապետարան | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող դպրոցական տարիքի երեխաների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն` երեխաներին իրենց կրթական կարիքներին համապատասխան կրթությունն ապահովելու նպատակով |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3.5 | Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի և համապատասխան հասարակական կազմակերպությունների աջակցությամբ՝<br>-կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող դպրոցական տարիքի երեխաների ծնողների համար սեմինարների կազմակերպում<br>- ներառված երեխաների ծնողների միջդպրոցական փոխօգնության խորհրդի աշխատանքներին աջակցություն | Երևանի քաղաքապետարան | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում | Հաշմանդամ երեխաների և նրանց ծնողների իրազեկության բարձրացում |
| 3.6 | Ներառական կրթության շաբաթի հայտարարում | Երևանի քաղաքապետարան | 2-րդ կիսամյակ | Ֆինանսավորում չի պահանջվում | Հասարակության ակտիվության բարձրացում |
| 3.7 | Բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի գործունեություն և կարողությունների հզորացում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /371501.8 հազ. դրամ/, դոնոր կազմակերպություննե ր | Շուրջ 500 երեխայի կարողությունների գնահատում |
| 3.8 | Հատուկ կրթության ոլորտում դասագրքերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակում և հրատարակում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 16000.0 հազ. դրամ | 20 դասագրքի և ձեռնարկի տպագրում |
| 3.9 | Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելության ժամանակ առնվազն անցումային միավոր հավաքած 1-ին և 2-րդ խմբերի, ինչպես նաև մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաների համար անվճար հիմունքներով կրթության ապահովում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 25500.0 հազ. դրամ | Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության կազմակերպում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3.10 | Բարձրագույն ուսումնական հաստա-տություններում ընդունելության ժա-մանակ առնվազն անցումային միավոր հավաքած 1-ին և 2-րդ խմբերի, ինչպես նաև մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաների համար անվճար հիմունքներով կրթության ապահովում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 24000.0 հազ. դրամ | Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության կազմակերպում |
| 4 | **Հաշմանդամների զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրեր** | | | | |
| 4.1 | “Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին” ՀՀ օրենքում և ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների մշակում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում | Հաշմանդամների զբաղվածության խթանելուն ուղղված սկզբունքների ամրագրում |
| 4.2 | Հաշմանդամների աշխատանքային ունակությունների վերականգնում և մասնագիտական ուսուցման կազմակերպում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /13090.0 հազ. դրամ/, դոնոր կազմակերպու-թյուններ, հասա-րակական կազմա-կերպություններ | 77 հաշմանդամի աշխատանքային ունակությունների վերականգնում և մասնագիտական ուսուցման ապահովում |
| 4.3 | Հաշմանդամներին աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 64800.0 հազ. դրամ /«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդու-նելիս աշխատավարձի մասնակի փոխհա-տուցում գործատու-ին» ծրագրի շրջա-նակներում | Շուրջ 180 հաշմանդամի համար աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4.4 | Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ մարզպետարաններ | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 6950.0 հազ. դրամ | Շորրջ 50 հաշմանդամի ներառում վարձատրվող հասարակական աշխատանքներում |
| 4.5 | Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար հաշմանդամներին տրամադրվող ֆինանսական աջակցություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 275.0 հազ. դրամ | Շուրջ 10 հաշմանդամի ֆինանսական աջակցության ցուցաբերում |
| 4.6 | Թափուր աշխատատեղերի նպատակային տոնավաճառի կազմակերպում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 4200.0 հազ. դրամ /նախատեսվել է կազմակերպել 6 տոնավաճառ, կանխատեսվում է, որ յուրաքանչյուր տոնավաճառին կմասնակցի շուրջ 2000 մարդ, այդ թվում հաշմանդամներ/ | Հաշմանդամներին աշխատատեղերով ապահովում |
| 4.7 | Համագործակցություն՝<br>-Գյումրու հաշմանդամների աշխատանքի վերականգնման կենտրոնի հետ<br>- զբաղվածության աջակցության ազգային ասոցիացիայի հետ<br>- տարբեր միջազգային, հասարակական, բարեգործական կազմակերպությունների հետ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում | Հաշմանդամների հիմնախնդիրների լուծման հարցում համակողմանի մոտեցում, սոցիալական գործընկերության զարգացում հաշմանդամների զբաղվածության ոլորտում |
| **5** | **Հաշմանդամների սոցիալական սպասարկման ծրագրեր** | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5.1 | Տուն-ինտերնատներում տարեցների ու հաշմանդամների սոցիալական սպասարկման իրականացում (հաշմանդամները կազմում են տուն-ինտերնատներում խնամվողների 47%-ը) | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 629190.0 հազ. դրամ /«Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի շջանակներում | 474 հաշմանդամի շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման կազմակերպում |
| 5.2 | Տնային պայմաններում հաշմանդամների սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրում (հաշմանդամները կազմում են սպասարկվողների շուրջ 30%-ը) | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 27331.2 հազ. դրամ /«Տնային պայմաննե-րում միայնակ տարեց-ների սոցիալական սպասարկում» ծրագ-րի շրջանակներում | Շուրջ 450 հաշմանդամի սոցիալական սպասարկման կազմակերպում տնային պայմաններում |
| 5.3 | Խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրում Վարդենիսի նյարդահոգեբուժական տուն-ինտերնատին կից հոգեկան առողջության ցերեկային կենտրոնում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 15372.4 հազ. դրամ /«Հոգեկան առող-ջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» ծրագրի շրջանակներում/ | 50 հաշմանդամի և նրանց ընտանիքի անդամների համար սոցիալական սպասարկման կազմակերպում ցերեկային կենտրոնում; |
| 5.4 | Մտավոր խնդիրներ ունեցող դեռահասների և երիտասարդների սոցիալ-վերականգնողական ծառայություններ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն «Փրկություն» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ) | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /16486.6 հազ. դրամ/, դոնոր կազմակերպություննե ր | Մտավոր խնդիրներ ունեցող 50 հաշմանդամների սոցիալական սապասարկման կազմակերպում ցերեկային կենտրոնում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5.5 | Հաշմանդամների տվյալների բազայի կատարելագործման և շահագործման աշխատանքների իրականացում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն «Նորք» տեղեկատվա-վերլուծական կենտրոն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 18119.7 հազ. դրամ | Հաշմանդամների վերաբերյալ ամփոփ տեղեկատվության ապահովում: |
| **6** | **Հաշմանդամների բժշկական օգնության և վերականգնողական ծրագրեր** | | | | |
| 6.1 | Հաշմանդամների բժշկական օգնությանը, վերականգնմանն ու սպասարկմանն ուղղված ծրագրերի իրականացում | ՀՀ առողջապահության նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 31000.0 հազ. դրամ | Շուրջ 31 000 հաշմանդամի հիվանդանոցային բուժման իրականացում, հաշմանդամների առաջնային բուժօգնության և դեղորայքի անվճար տրամադրման ծառայություններ՝ ըստ դիմելիության |
| 6.1.1 | Հաշմանդամության կանխարգելման նպատակով նյութափոխանակության ժառանգական հիվանդությունների /բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկետոնու-րիայի/ և բնածին այլ շեղումների հայտնաբերմանն ուղղված նորածնային սկրինինգ ծրագրերի իրագործում ՀՀ ողջ տարածքում | ՀՀ առողջապահության նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե, «Երեխաների և դեռա-հասների առողջու-թյան ու զարգացման ազգային ռազմավա-րության ներդրման 2010-2012թթ. գործո-ղությունների ծրագրի ծրջանակներում | Ժառանգական և զարգացման բնածին հիվանդությունների հետևանքով առաջացող հաշմանդամության կանխարգալում |
| 6.2 | Հաշմանդամների բժշկասոցիալական վերականգնման աշխատանքների կազմակերպում և իրականացում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 167278.5հազ. դրամ | Շուրջ 983 մարդու ստացիոնար բուժման կազմակերպում «ԱՐԹՄԵԴ» և «Սթրես» բուժվերականգ-նողական կենտրոններում |
| 6.3 | Հաշմանդամների համար վերականգ-նողական օգնության ծրագրեր իրա-կանացնող կազմակերպությունների աշխատանքների համակարգում, կա-տարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության ստացում և ամփոփում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում | Համակարգված վերականգնողական ծառայության կազմակերպում, վերականգնողական ծրագրերի պլանավորում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6.4 | Հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրերի իրագործումը կանոնակարգող ենթաօրենսդրական ակտերի լրամշակման աշխատանքներ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում | Հաշմանդամների վերականգնողական գործընթացի պարզեցում |
| 7 | **Հաշմանդամներին վերականգնողական, տեխնիկական և օժանդակ այլ պարագաներով ապահովման ծրագրեր** | | | | |
| 7.1 | Հաշմանդամներին պրոթեզա-օրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 857.531.5 հազ. դրամ «Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում | 13631հաշմանդամի պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման ծառայությունների մատուցում |
| 7.2 | Հաշմանդամներին սայլակներով ապահովում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 63000.0 հազ. դրամ «Հաշմանդամներին մատուցվող ծառա-յություններ» ծրագրի շրջանակներում | 450 հաշմանդամի սայլակի տրամադրում |
| 7.3 | Մինչև 12 տարեկան երեխաներին լսողական սարքերով ապահովում (OTIKON և SIMENS ֆիրմաների) | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն «Հավատ» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ) | Տարվա ընթացքում | «Հովարդ Կարագյոզյան» բարեգործական հիմնադրամ | Լսողական սարքի կարիք ունեցող շուրջ 120 երեխայի լսողական սարքի տրամադրում |
| 7.4 | Հաշմանդամներին և տարիքային կենսաթոշակառուներին ռուսական արտադրության լսողական սարքերով, 12-18 տարեկան երեխաներին և 19-25 հաշմանդամ երիտասարդներին եվրոպական արտադրության լսողական սարքերով ապահովում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 56.162.0 հազ. դրամ «Հաշմանդամներին մատուցվող ծառա-յություններ» ծրագրի շրջանակներում | Լսողական սարքի կարիք ունեցող 1318 մարդու լսողական սարքերի տրամադրում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7.5 | Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ (Բրայլյան) տառատեսակներով գրքերի տպագրում, տետրերի ձեռք բերում և «Խոսող գրքերի» ձայնագրության ապահովում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 10506.4 հազ. դրամ «Հաշմանդամներին մատուցվող ծառա-յություններ» ծրագրի շրջանակներում | 42336 թերթ Բրայլյան գրքերի , 1000 հատ Բրայլյան տետրերի, 74400 թերթ «Բյուլետեն» ամսագրի տպագրում, 1500 ժամ «Խոսող գրքերի» ձայնագրում |
| 7.6 | Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արև» համակարգով ուսուցում և համակարգչային տեխնիկայով ապահովում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 16248.0 հազ. դրամ «Հաշմանդամներին մատուցվող ծառա-յություններ» ծրագրի շրջանակներում | Տեսողությունից հաշմանդամություն ունեցող 20 անձանց «Արև» համակարգով ուսուցում և համակարգչի տրամադրում |
| 7.7 | Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց աչքի պրոթեզով ապահովում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 4.550.0 հազ. դրամ «Հաշմանդամներին մատուցվող ծառա-յություններ» ծրագրի շրջանակներում | Հաշմանդամություն ունեցող 70 անձի աչքի պրոթեզավորում |
| 7.8 | Ձայնաստեղծ սարքերով ապահովում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 35000.0 հազ. դրամ. դրամ«Հաշմանդամնե րին մատուցվող ծա-ռայություններ» ծրագ-րի շրջանակներում | Ձայնաստեղծ սարքի կարիք ունեցող 100 անձի ձայնաստեղծ սարքով ապահովում |
| **8** | **Հաշմանդամների ինտեգրումը հասարակություն մշակույթի և սպորտի միջոցով** | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8.1 | «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ գործունեության ապահովում | ՀՀ մշակույթի նախարարություն, "Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն" ՊՈԱԿ | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 28353.1 հազ. դրամ | Հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ըն-տանիքների երեխաների հա-մար /շուրջ 400 երեխայ/ գիշե-րօթիկ և հատուկ դպրոցներում գեղարվեստական կրթության կազմակերպում |
| 8.2 | "Ընտանեկան գրադարանավար" ծրագրի շահագործում մարզային գրադարաններում | ՀՀ մշակույթի նախարարություն, «Լոռու մարզային գրադարան» ՊՈԱԿ «Շիրակի մարզային գրադարան» ՊՈԱԿ | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 774.0 հազ. դրամ | Տեղաշարժման խնդիրներ ունեցող 230 հաշմանդամի համար գրադարանային սպասարկում տնային պայմաններում |
| 8.3 | "Արև" տեղեկատվական հաղորդակցման ծրագրի շահագործում գրադարաններում | ՀՀ մշակույթի նախարարություն, «Արարատի մարզային գրադա-րան» ՊՈԱԿ «Արագածոտնի մարզային գրադարան» ՊՈԱԿ «Արմավիրի մարզային գրադարան» ՊՈԱԿ | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 1200.0 հազ. դրամ | Տեսողության խնդիրներ ունեցող շուրջ 300 հաշմանդամի համար տեղեկատվության և հաղորդակցման ապահովում |
| 8.4 | Արտադպրոցական ուսումնական հաստատությունների և միջազգային ու տեղական կազմակերպությունների աջակցությամբ հաշմանդամ երեխաների համար ցուցահանդեսների կազմակերպում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | Տարվա ընթացքում | դոնոր կազմա-կերպություններ | Շուրջ 90 հաշմանդամ երեխայի մասնակցություն ցուցահանդեսներին |
| 8.5 | Պետական աջակցություն՝<br>- "Հայաստանի կույրերի միավորում" հասարակական կազմակերպությանը "Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե" հասարակական կազմակերպությանը<br>- "Խուլերի հայկական սպորտային կոմիտե" հասարակական կազմակերպությանը<br>- "Հայկական հատուկ օլիմպիադաներ" հասարակական կազմակերպությանը | ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 9000.0 հազ. դրամ | 350 հաշմանդամի մասնակցության ապահովում կազմակերպվող միջացառումներին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8.6 | Ներառական կրթության դպրոցների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների համագործակցությամբ ձեռքի աշխատանքների, նկարների ցուցահանդեսների և այլ մրցույթների կազմակերպում | Երևանի քաղաքապետարան | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 1500.0 հազ. դրամ | Հաշմանդամների մասնակցություն կազմակերպվող միջոցառումներին |
| 9 | **Սոցիալական գործընկերություն հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների միջև** | | | | |
| 9.1 | Հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն և նրանց կողմից իրականացվող ծրագրերի համակարգում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով | Տարվա ընթացքում | Ֆինասավորում չի պահանջում | Հաշմանդամների հիմնախանդիրների լուծման հարցում համակողմանի մոտեցում |
| 9.2 | Հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին մասնակցություն և աջակցություն /խորհրդատվություն, տեղեկատվություն, տարածքի տրամադրում, համագործակցող մասնագետների ապահովում/ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետարան, ՀՀ մարզպետարաններ | Տարվա ընթացքում | Ֆինասավորում չի պահանջում | Պետական և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության խթանում |
| 10 | **Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները կանոնակարգող ՀՀ օրենսդրությունը կատարելագործելու, այն ՄԱԿ-ի  կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու ուղղությամբ տարվող աշխատանքներ** | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10.1 | Հաշմանդամների սոցիալական պաշտ-պանության ռազմավարության վերա-նայում, նրանում սոցիալական ներառ-ման մոտեցումների ամրագրում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջում | ՀՀ օրենսդրության կատարե-լագործում, այն ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցում |
| 10.2 | ՄԱԿ-ի կոնվենցիայի, Հաշմանդամների սոցիալական ինտեգրման 2006-2015թթ Եվրախորհրդի գործողությունների ծրագրի և վերանայված ռազմավարու-թյան դրույթների և սկզբունքների հի-ման վրա «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի ընդունում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջում | ՀՀ օրենսդրության կատարե-լագործում, այն ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցում |
| 10.3 | «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի կիրառումն ապահովող համապատասխան ենթաօրենսդրական ակտերի մշակում և ընդունում՝ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2010-2011թթ. | Ֆինանսավորում չի պահանջում | ՀՀ օրենսդրության կատարե-լագործում, այն ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցում |
| 10.4 | Հաշմանդամության սահմանման եվրոպական՝ աշխատունակության կորստի աստիճանը սահմանող մոդելի հայեցակարգի մշակում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջում | ՀՀ օրենսդրության կատարե-լագործում, այն ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցում |